

ԼՍԱՏԵՍՈՂԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՒ ԵՐԿՎԱՅԱՑՈՒՅԻՉՆԵՐՈՒ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԺՈՂՈՎ

Երեկ երեկոյան պատկերասփիւռի «Էլ. Պի. Սի.» կայանի կեդրոնին մէջ տեղեկատուութեան նախարար Գալի Արիտի եւ յաստատողական միջոցներու ներկայացուցիչներու խորհուրդը կայացուցին նիստ մը, որուն ընթացքին յայտնեցին, որ իրենց մտահոգութիւնը փարատած է պատկերասփիւռի «Էլ. Սի. Վի.» կայանին վերաբերեալ, որովհետեւ այդ հարցը արդէն իսկ դատական իշխանութեանց քննարկումին ենթակայ է:

Նիստին ետք յայտարարուեցաւ, որ «Էլ. Սի. Վի.»-ի հարցը փոխ օրինական հարց է, հետո քաղաքական որեւէ օգտագործումէ, ինչպէս նաեւ յոյս յայտնուեցաւ, որ դատական իշխանութիւնը ամենէն արագ միջոցին պայն կ'ենթարկէ վերատեսուեալները:

Միւս կողմէ, ներկայացուցիչներու խորհուրդը կոչ ուղղեց իշխանութեան երեք պետներուն, որ մինչեւ Սեպտեմբեր 15 երկարող պայմանագրով երկարաձգեն, որպէսզի լրատուական հաստատութիւնները կարենան պատրաստել իրենց յատուկ վարչական, ելեւմտական եւ արհեստագիտական տեղեկագիրները, ինչպէս նաեւ խնդրեց, որ իւրաքանչիւր հաստատութիւն իր նիւթական պարտաւորութիւնները կատարէ մասնավարձ իրութեամբ:

ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏԻ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Նախագահ Կոր. Էմիլ Լահուտ երէկ ընդունեց մշակութի նախարար Լասան Սայանին, որ կը նախագահէ Յրանախոս Երկիրներու Վեհաժողովի նախապետարանական աշխատանքներու յանձնախումբին:

Սայանի նախագահ Լահուտի ներկայացուց Վեհաժողովին առնչութեամբ նորագոյն տեղեկութիւնները, ինչպէս նաեւ՝ վեհաժողովին մասնակցող երկիրներուն թիւը:

Քննարկուեցան նաեւ, Պէյթէտի մէջ մուկայիքի ցուցահանդէսին բացումին ետք, հնութիւններու ընդհանուր տնօրէնութեան կացութիւնը, ինչպէս նաեւ ժայէյի բերդը եւ անոր շուրջ հնութիւնները վերանորոգելու աշխատանքը:

Նախագահ Լահուտի այցելեց ընդհանուր դատախաչ Ատնան Ատունի: Քննարկուեցաւ երկրին ընդհանուր վիճակը:

Նախագահ Լահուտ ընդունեց պետութեան ապահովութեան ուժերու ընդհանուր տնօրէն Կոր. Էտուար Մանսուրը, որուն հետ քննարկեց ապահովութեան առնչուած հարցեր:

Նախագահական պայտ այցելեց նաեւ Արաքական Մշակութի Համախմբումի մէկ պատիւընկերութիւնը, գլխաւորութեամբ համախմբումի ընդհանուր քարտուղար Ապտէլ Ռաուֆ Ֆատալայի:

Ֆատալայ իր խօսքին մէջ յայտնեց, որ նշեալ համախմբումին կեդրոնը կը գտնուի Պէյրութի մէջ, որ արաքական մշակութի մարտաքաղաքն է: «Համախմբումը այս տարի իր տասնամեակը կը նշէ Լիբանանի տարածքին՝ կատարելով փաստապէս տօնակատարութիւններ», ըսաւ ան:

Նախագահ Լահուտ իր կարգին դրուատեց համախմբումին աշխատանքներն ու կազմակերպ շարքերով նպատակներ հետապնդելու եւ իրականացնելու անոր կամքը: Նախագահ Լահուտ շեշտեց արաքական բոլոր երկիրներուն միջեւ մշակութի մարտնչական ներքին մարտնչական գործակցութեան անհրաժեշտութիւնը եւ պարտաւորութիւնը յայտնեց Լիբանանի մէջ թէ դուրս համախմբումին կողմէ կատարուելիք բոլոր աշխատանքներուն:

ՀԱՐԻՐԻ ԿԸ ԲՆԱԴԱՏԵ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆՈՒՄՆԵՐՈՒ ԸՆԹԱՅԸ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի երէկ հաստատեց, որ Միացեալ Նահանգներու դէմ 11 Սեպտեմբեր 2001 թ. ահաբեկչական արարքները ծխտական անդրադարձներ ունեցած են արաքական եւ իսլամական աշխարհներուն, եւ մասնաւորապէս արաքի յարաբերութիւններուն, շահերուն եւ անվտանգութեան վրայ:

«Արդար չէ կուրօքն ահաբեկչութեան յանցանքը պիտակի պէս պարտադրել բոլոր արաքներուն եւ իսլամներուն, եւ քննադատելի է Միացեալ Նահանգներու ընթացքը, որ կ'ըսէ. «Մենք ահաբեկչութեան դէմ ենք եւ ո'չ արաքներուն կամ իսլամներուն», բայց գործնապէս հա-

կատարել կ'ընեն», ըսաւ Հարիրի: «Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարի օգնական Ռիչարդ Արմիթէյ-ճի կողմէ Հըրպալայի ուղղուած սպառնալիքներուն նշանակութիւնը չափազանցուած է Լիբանանի մէջ, ամեն ինչ կ'ընեն այս առնչութեամբ մեր կեցածքը եւ իրենց այս մտեցումն ալ նորութիւն մը չէ», ըսաւ Հարիրի՝ ակնարկելով, որ «մենք Հըրպալայի ուղղուած աներկեան վիճուողական հարածի մը մտավախութիւնը չունինք»:

Վարչապետ Հարիրի դիտել տուաւ, որ «երէ Համախմբումը աշխարհի Առեւտուրի Կեդրոնին բախած օդանաւերէն մէկուն մէջ իբրանացի մը կար, ապա չի նշանակել, որ Լիբանան այդ արարքին հետ առնչութիւն ունէր եւ Միացեալ Նահանգները քաջ գիտէն, թէ Լիբանան արքան կը գործակցի ահաբեկչութեան դէմ պայքարին մէջ, իսկ այլ իմաստով կատարուած յատարարութիւնները կու գան Խարայէլէն, բայց մենք անոր թոյլ պիտի չտանք, որ Միացեալ Նահանգները մեր դէմ լարէ»:

Հարիրի նաեւ վերահաստատեց Լիբանանի ընդդիմութիւնը՝ Իրաքի ուղղուած որեւէ վիճուողական հարուածի, իսկ Լիբանանի մէջ պաշտօնակրեան գաղթականացումներու կարգավիճակին մասին ըսաւ, որ անիկա կախեալ է շրջանային պայմաններէն, «բայց ամէն պարագայի բոլոր իբրանացիները դէմ են պաշտօնակրեան գաղթականներու բնակեցումին»:

Ս. ԱԳՆԷՍ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՎԱՐժԱՐԱՆ

2002-2003 տարեշրջանի լրացուցիչ արձանագրութիւնները հիմ եւ ցոր աշակերտներուն համար պիտի կատարուին Երկուշաբթի, 9 Սեպտեմբերէն սկսեալ, ամէն օր առաւօտեան ժամը 8:30էն 12:30, բացի Շաբաթ եւ Կիրակի օրերէն: Դիրացնելու համար վերամուտի աշխատանքները, ցայսկին աշակերտները պարտին արձանագրուելի որոշուած թուականներուն:

Նորիկ աշակերտները պարտին իրենց հետ բերել ինքնուրու բուրգի լուսապատճեն կամ «խորած քայտ», 2 լուսանկար եւ ցայտող տարուան վիճակագրոյցը:

Մանկապարտեզ կ'ընդունուին երեք տարեկանց վար փոքրիկները, պայմանաւ որ ամօր կարողութիւն ունենան հասկնալու եւ հասկնուելու:

Վերաքննութիւնները տեղի կ'ունենան Ուրբաթ 13 Սեպտեմբերին, առաւօտեան ժամը 9:00ին: ●ՎԵՐԱՄՈՒՏ Գ. Միջնակարգ (պրոֆէ) Երեքշաբթի, 17 Սեպտեմբերին

Միջնակարգ (7րդ 8րդ) եւ ցայտակարար՝ Երկուշաբթի, 30 Սեպտեմբերին Մանկապարտեզ Հինգշաբթի, 3 Շուկտեմբերին ●ԲԱՐԻ ՎԵՐԱՄՈՒՏ ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ Ս. ԱԳՆԷՍ ՎԱՐժԱՐԱՆԻ

ՄԱՀԱԶԴ

Տէր եւ տիկին Սողոմոն եւ Թագուհի Մարտիրոսեան եւ զաւակուհի
Տէր եւ տիկին Սարգիս եւ Մարի Բահաբեան եւ զաւակուհի
Տէր եւ տիկին Յովսէփ եւ Վարդուհի Բահաբեան եւ զաւակուհի
Տէր եւ տիկին Վարուժան եւ Էլիզապէթ Պատարճեան եւ զաւակուհի
եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց կնոջ, մօր, մեծ մօր եւ Հարազատին՝

ՀԱՅԿԱՆՈՒԾ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆԻ (Ծնեալ՝ ԶԱՏԻԿԵԱՆ, 1926ին)

մահը, որ պատահեցաւ Չորեքշաբթի, 11 Սեպտեմբեր 2002, կէսօրէ ետք ժամը 5:00ին: Ծնողարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Հինգշաբթի, 12 Սեպտեմբեր, կէսօրէ առաջ ժամը 11:00ին, Նոր Ատանայի Ս. Աստուածածին եկեղեցու մէջ, ուր կ'է Հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը: ●Ներկայս ընդունիլ իբրեւ մահապղ: ●Ցաւակցութիւնները կ'ընդունուին Վարուժան եւ Էլիզապէթ Պատարճեանի բնակարանը, Պուրճ Համուտ, ջուրի ընկերութեան թաղ, Փուռ Ապուի շէնք, Ա. յարկ, Հինգշաբթի 12, Ուրբաթ 13 եւ Շաբաթ 14 Սեպտեմբերին:

ՈՒՇԵՆԿՈՒՄ ԴԺՈՒՅ ԶԵ ՊԵՅՐՈՒԹԵՆ

Վարչապետ Հարիրի երէկ «Էմ. Պի. Սի.» արբանեակային կայանին տրուած հարցալրոյցի մը մէջ յայտնեց, որ 11 Սեպտեմբեր 2001ին Միացեալ Նահանգներու վրայ ահաբեկչական արարքներու Լիբանանի վրայ անդրադարձները մնացած են նուազագոյն սահմանի մէջ եւ Միացեալ Նահանգները դժգոհ չեն Լիբանանի կեցուածքէն: «Ամերիկեան մամուլին մէջ Սէուտական Արաբիոյ դէմ շրջապատուած արշաւին ետին կը կանգնին ամերիկացի ծայրայեղ աշակերտները եւ անոնք նպատակն է պարտադրել, որ Սէուտական Արաբիա փոխէ Միջին Արեւելքի խաղաղութեան, պաշտօնակրեան դատին եւ Իրաքը հարուածելու ամերիկեան օրագրի անհանդիմանութեամբ իր կեցուածքները», յայտնեց ան:

«Ըստ երեւոյթին, եւ նախապատրաստութիւններէն դատելով կը թուի, թէ Միացեալ Նահանգներ վճռած են վիճուողական հարուած ուղղել Իրաքի, բայց մենք կը մտախոհուք, որ անան բան չպատահի», եպրափակեց վարչապետ Հարիրի:

ԾԱԽՈՒ ԶԱՐԿԱԲԱԺԻՆ

●Տրպայայ, 155 քառ. մետր, գեղատեսիլ դիրք. 60,000\$: Հեռ. 03-278223:

ԾԱԽՈՒ ԶԱՐԿԱԲԱԺԻՆ

●Թրատ, Սար Եուսէֆ եկեղեցու տես, 1 մնչաւեանակ, խոհանոց եւ բաղնիք: Դիմել՝ հեռ. 01-497082:

ՀԱՆԴԻՍԱԿՈՒՄ ՍՈՒՐԲ ՊՍԱՐԱԳ ՄՈՒՍԱ ԼԵՐԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻՆ ԵՒ ԽԱԶՎԵՐԱՅԻ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ

Կիրակի, 15 Սեպտեմբեր 2002ին, Այնճարի Ս. Պօղոս եկեղեցու մէջ հանգիստուր Ս. պատարագ պիտի մատուցուի: Պիտի պատարագէ եւ քարոզէ՝

ԳԵՐԾ. Տ. ԳԵՂԱՍ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆ (Առաջնորդ Լիբանանի Հայոց թեմին)

Սկիզբ ժամերգութեան ժամը 8:00ին Ս. պատարագ ժամը 9:30ին Զարոզ ժամը 11:00ին Մատաղօրհներ ժամը 12:00ին

Ս. պատարագի աւարտին Յուշարձան համալիրի առջեւ հոգեհանգստեան արարողութիւն եւ մատաղօրհներ պիտի կատարուի հերոսամարտին ինկած անհատակներու հոգիներուն համար: Սիրով կը իրակորեց մեր սիրելի ժողովուրդի զաւակները՝ մասնակցելու մեր ազգը ու հաւատքը պանծացնող այս տօնակատարութեան:

ԹԱՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ Ս. ՊՈՂՈՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՄԱՀԱԶԴ

Տիր Կարապետ Չամիչեան
Տէր եւ տիկին Յարութ եւ Դարար Չամիչեան եւ զաւակուհի
Տէր եւ տիկին Բաֆֆի եւ Մարիա Աւետիսեան եւ զաւակուհի
Տէր եւ տիկին Վիգէն եւ Վանիա Պապիկեան եւ զաւակուհի
Արժ. Տ. Մեարոպ քնն. Թաշեան եւ երէցկին Գարմէն եւ զաւակուհի
եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց կնոջ, մօր, մեծ մօր եւ Հարազատին՝

ՎԵՀԱՆՈՒԾ (ԱԼԻՍ) ՉԱՄԻՉԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Չորեքշաբթի, 11 Սեպտեմբեր 2002ին: Ծնողարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Հինգշաբթի, 12 Սեպտեմբեր, կէսօրէ առաջ ժամը 11:00ին, Ս. Աստուածածին եկեղեցու մէջ, Վիլլաներ - Հայէպ:

●Ներկայս ընդունիլ իբրեւ մահապղ: ●Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը՝ Հինգշաբթի 12, Ուրբաթ 13, Շաբաթ 14 եւ Կիրակի 15 Սեպտեմբերին:

ՄԱՀԱԶԴ

Տիր Մովսէս Պետրեան եւ զաւակները՝ Մինաս եւ Լեւոն
Տէր եւ տիկին Լեւոն Բեչեան եւ զաւակուհի
Տէր եւ տիկին Ճորճ Պալլաբեան եւ զաւակուհի
Տէր եւ տիկին Գրիգոր Պալլաբեան եւ զաւակուհի
Տէր եւ տիկին Շաւարշ Յակոբեան եւ զաւակուհի
Տիկին Մարի Արայանեան եւ զաւակուհի
Պետրեան ընտանիք
Արայանեան ընտանիք
Պալլաբեան ընտանիք
եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց կնոջ, մօր, քրոջ եւ Հարազատին՝

ՍԵԼԻՆԷ ՊԵՏԻՐԵԱՆԻ (Ծնեալ՝ ՊԱԼԸԳՃԵԱՆ, 1936ին)

անակնկալ մահը, որ պատահեցաւ Երկուշաբթի, 9 Սեպտեմբեր 2002ին, իր բնակարանին մէջ, Փարիզ: Ծնողարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի Երկուշաբթի, 16 Սեպտեմբեր 2002, ժամը 3:00ին, Փարիզի Ս. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցու մէջ: ●Ներկայս ընդունիլ իբրեւ մահապղ: ●Ցաւակցութիւն յայտնելու համար կարելի է հեռագրային հետեւեալ թիւին. 003314790613 (Փարիզ):

ՍԼԱԶ

ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ... ՊՈՏՐՈՒՄ... ՄԱՐՄԱՐԻՍ

1998ին մէկ շաբաթ Հայաստան այցելեցի գործընկերոջ մը հետ, նորագութեան ընթացքի մէջ գտնուող եկեղեցիներու մասին պատկերասփիւռը յօդուածաշարք մը պատրաստելու համար: Օդանաւին մէջ միջին տարիքի ամուլ մը նստած էր մեր շարքին եւ քանի մը վայրկեան ետք յայտնի դարձաւ, որ առաջին անգամ հայրենիք կ'այցելէին:

– Դուք քանի օր պիտի մնաք, – հարցուց տիկինը եւ ակնարկեց. – Մենք երկու շաբաթ պիտի մնանք եւ առաջնակարգ պանդոկ մը պիտի իջնենք:

Ներողամտաբար ժպտացիք կնոջ այս հաստատումին համար եւ յայտնեցիք, որ մենք միայն մէկ շաբաթ պիտի մնանք Հայաստան:

Շաբաթ մը ետք վերադարձի պահուն հանդիպեցանք նոյն ամսին: Ամուսինը տաք վիճարկութեան մէջ էր խուճիկ պատասխանատուին հետ եւ կը պնդէր, որ պիտի վերադառնան, չեն ուզել մնալ շաբաթ մը եւս:

Օդանաւին մէջ առիթ գտալ հարցնելու, թէ ինչն է կանուխ կը վերադառնան: Կինը չձգեց, որ մարդը պատասխանէ: «Տոյսուր է, տուսուր: Ոչ լաւ նայիք քլայ կայ, ոչ ալ մարդավարի պատելիք տեղ. ամմէնը եկեղեցի, մանդրացիք, գոնէ ծով մը ըլլար»: Նոյնիսկ սիրտ չունեցաւ, ըսելու որ բառը տխուր է եւ ոչ՝ տուսուր: Երեւոյթը իսկապէս տխուր էր:

Վերջերս նորոյց դարձած է խուճիկեամ թուրքիս այցելելը, Արեւմտեան Հայաստան ուխտի երթալու պատրուակին տակ: Հոս անմիջապէս պետք է նշել, որ կան հայորդիներ, որոնց թիւը շատ քիչ է, որոնք իսկապէս ուխտի կ'երթան Արեւմտեան Հայաստան, կ'այցելեն լքուած եկեղեցիներ եւ հոգեպէս կը վերանորոգուին:

Սակայն անհեթեթ է անհասկնալին «Արեւմտեան Հայաստան կ'երթանք» ըսելով Պոտրոմի եւ Մարմարիսի ծովեկերքները հաճոյանալն է:

«Ո՞ր եկեղեցիները այցելեցիք. Աղթամարի Ս. Խաչ գողտրիկ եկեղեցին տեսա՞ր», հարցուցի Արեւմտեան Հայաստան «ուխտասարգուիկի մը: Նայուածքէն զգացի, որ ոչինչ հասկցաւ ըսածէս. ու պատասխանեց, ամենայն անկեղծութեամբ. «Պիտի երթնայ յինք» բայց ժամանակ չեղաւ. Պոլիս չաճէ պտուտեցալ, լեւոյ Պոտրոմ գացի. գիւղէս»:

Պոլիս գացած ատեն Մարաշէն անցալ: Հայր մարաշցի է»:

Այսքան: Անցնիլ Մարաշէն կամ Սասունէն եւ կամ Սիւնէն եւ աճապարել դէպի Պոտրոմ եւ Մարմարիս... ու եղաւ ուխտագնացութիւն դէպի Արեւմտեան Հայաստան: Յիշեցի հայ տիկինը, որ կը փախէր ոչ թէ Արեւմտեան Հայաստանէն, այլ Անկախ Հայաստան, որովհետեւ ծով չկար բայց միայն եկեղեցի...

... Պոտրոմի եւ Մարմարիսի ծովեկերքը անշուշտ որ աւելի լաւ վայր մըն է ուխտի երթալու... Ա. ԱՊՏԱԼԵԱՆ

ԱՅՆՃԱՐ ԱՅՆՃԱՐ

ՄՈՒՍԱ ԼԵՐԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻՆ 87ԱՍԵԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆՆԵՐ

●Ընդհանրութեան անհատական ցուցահանդէս, արուեստագետ ՎԱՐՈՒԺԱՆ ԱՐՏԻՐԵԱՆԻ. հովանաւորութեամբ Հայաստանի դեսպան ԱՐԵԳ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ

Բացում Ուրբաթ, 13 Սեպտեմբեր 2002, երեկոյեան ժամը 7:30ին, «Սպարիս Ջէյլեան» ժողովրդային տան մէջ:

●ԾԱՆՕԹ.- Յուցահանդէսը բաց պիտի մնայ Շաբաթ 14 եւ Կիրակի 15 Սեպտեմբեր 2002, առաւօտեան ժամը 10:00էն մինչեւ ուշ գիշեր:

●Հանդիպում-գրոյց՝ դեսպան ԱՐԵԳ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ հետ, միւլթ «Հայաստանը այսօր եւ վաղը»: Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 13 Սեպտեմբեր 2002, երեկոյեան ժամը 8:30ին, «Գ. Կիւլպեկեան» սրահին մէջ:

●Ժողովրդային տօնակատարութիւն եւ ազգային յեղափոխական երգերու փառատօն, կ'երգեն՝

ԿԻՈՒՆ ՏԻՉԵՔԵՆԵԱՆ ՍԱՆՈՒԿ ՄԻՆԱՍԵԱՆ ՍԻԼԿԻ ՏԵՄԻՐՃԵԱՆ ԳՕԳՕ ԹԻԹԻԻՆՃԵԱՆ Մասնակցութեամբ՝ օրկանխատներ ՐԱՅԻՍ ՏՕՆԵՐԵԱՆ ԵՒ ՅՅԿԻԿ ԱՏՈՒՐԵԱՆ

Տեղի կ'ունենայ Շաբաթ, 14 Սեպտեմբեր, երեկոյեան ժամը 10:00ին, Յուշարձան համալիրի շրջափակէն մերս:

●«Սուսա Լեռ Այնճար» թանգարանի շէնքի հիմնադրութիւն: Տեղի կ'ունենայ Կիրակի, 15 Սեպտեմբեր, յաւարտ Ս. պատարագի, Սուսան Լեռան յուշարձանի կողքին, մասնակցութեամբ լիբանանահայ երեք համայնքներու առաջնորդներուն: Հիմնարկէին կը յաջորդէ աւանդական մատաղօրհներ:

ԱՐԱՄ Ա. ԿԸ ՅԻՇԷ 11 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ ԱՆՍԵՂ ՁՈՂԵՐԸ

11 Սեպտեմբեր 2001ին Նիլ Երզրի եւ Ուաշինգտոնի մէջ պատահած ահաբեկչական արարքներուն առաջին տարեկիցին առիթով, Միացեալ Նահանգներու Արեւելեան թեմի առաջնորդ Օշական արք. Չոլոյեանին եւ Արեւմտեան թեմի առաջնորդ Մուշեղ եպս. Մարտիրոսեանին ուղղած իր նամակին մէջ Արամ Ա. կաթողիկոս առաջին հերթին կը յիշէ անմեղ Կոնստանտինոպոլիսի հոգիներուն հանգուտան համար:

Նոյն առիթով վեհափառ հայրապետը կը դատապարտէ տեղի ունեցած ոճիրը, ինչպէս նաեւ՝ ամէն տեսակ ոճիր, որ խոտոր կը համեմատի մարդկային արժանապատուութեան ու կոչուումին եւ բարոյական ու կրօնական արժէքներուն:

Արամ Ա. կաթողիկոս կը թելադրէ Օշական եւ Մուշեղ արքայանքներուն, որ իր եւ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան համակրանքն ու օրակցութիւնը յայտնեն անբրկացի ժողովուրդին:

ՅԻՇԱՏԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԴԵՍՊԱՆԱՏԱՆ ՄԷՋ

Լիբանանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպանատունը հանդիսութեամբ մը երէկ նշեց Միացեալ Նահանգներու դէմ 11 Սեպտեմբեր 2001ին գործուած ահաբեկչական յարձակումներուն առաջին տարեդարձը: Ներկայ էին իշխանութեան երեք պետերուն ներկայացուցիչները եւ բազմաթիւ անձնատուութիւններ:

Դեսպան Վինսընթ Պէթլը արտասանեց խօսք մը, որուն մէջ յայտարարեց, որ ահաբեկչութեան դէմ շրջապատեցող միջազգային արշաւը անցնելու արժանազան է՝ ընդգծելով, որ անկէ թան 90 երկրի մէջ ձեռնարկուած եւ արգելափակուած է շուրջ 2400 ահաբեկիչ, իսկ 160 երկրի մէջ առեւտրու են ահաբեկչական նպատակներու յատկացումը 100 միլիոն տոլար: «Ահաբեկչութեան դէմ պատերազմը կը շարունակուի եւ ոչ դիւրին, ոչ ալ կարճատեւ պիտի ըլլայ», ըսաւ դեսպանը՝ բարձր գնահատելով Լիբանանի եւ այլ պետութիւններու վորակցութիւնը «Քայտիս»ի ցանցին դէմ:

Հանրապետութեան նախագահի ներկայացուցիչ ճարտարարուեստի նախարար Ժորժ Աֆրամ իր խօսքին մէջ հաստատեց, որ բոլոր իբրանահայերէնը, քաղաքացի ըլլան թէ պետական պաշտօնատար, կը բաժնեն բարեկամ Միացեալ Նահանգներու ցարը:

Խորհրդարանի նախագահի ներկայացուցիչ երեսփոխան Ալի Պապի ըսաւ, որ 11 Սեպտեմբերի արարքները մարդկութեան ճակտին արատ մըն են եւ աշխարհը դասեր պէտք է քաղէ անոնցմէ:

Վարչապետի ներկայացուցիչ Ֆուատ Սիմիորա ըսաւ, որ բռնագրաւուած պետական ահաբեկչութեան գլխաւոր ձեռնարկ է, որ պարարտ հող կը ստեղծէ յուսահատական արարքներու, իսկ ահաբեկչութիւնը արմատախիլ ընելու համար պէտք է արդար եւ խաղաղ ձեռով լուծել շրջանային տագնապները:

ԶՕՐ. ԼԱՅՈՒՏ – ՊԵՐՐԻ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ

Նախագահ Կոր. Էմիլ Լահուտ երէկ ընդունեց խորհրդարանի նախագահ Նեպիի Պրրիին, որուն հետ քննարկեց տեղական թեմի հարցերը, ինչպէս նաեւ շրջանային պարագայները:

Տեսակցութեան էտը Պրրիի յայտարարեց, որ նախագահ Լահուտի հետ քննարկուող կեդրոնացած է Հասպանի եւ Ուաշինգտոնի ջուրերուն վերաբերեալ Լիբանանի դէմ յարախիչեան սպառնալիքներուն վրայ: «Նախագահ Լահուտ պահանջեց պատրաստել նամակ մը, ուր կը ներկայացուին այս հարցին վերաբերեալ բոլոր մանրամասնութիւնները եւ կը շեշտուին այս ծրագրին ներքին Լիբանանի իրաւունքները: Սյու նամակը պիտի յղուի արտասահմանի մէջ Լիբանանի բոլոր դիւանագիտական ներկայացուցչութիւններուն եւ միջազգային կազմակերպութիւններուն, որ պիտի շրջապատուի յայնաձիր շարժում մը յարգել տալու միջազգային օրէնքներու, դաշինքներու եւ համաձայնագրերու մէջ հաստատուած իրաւունքները», յայտնեց Պրրիի:

Խորհրդարանի նախագահը հաստատեց, որ Լիբանանի շրջանային եւ միջազգային մակարդակի վրայ աշխատանք պիտի տանի վերափոխանայու համար Հասպանի եւ Ուաշինգտոնի ջուրերէն իր օրինական իրաւունքը հանդիսացող արդար բաժինին, որ հիմնական իր ստացածին բազմապատիկն է, որովհետեւ Խորայի կը ստանայ տարեկան 150 միլիոն խորանարդ մէթր, իսկ Լիբանան՝ 7 միլիոն, մինչ իր հողէն բխող Հասպանիի ջուրէն իր ստացած բաժինը իր իրաւունքին մէկ կոտորակն է:

ՔԸՐՆԵԹ ՇԵՀՈՒԱՆԻ ՊԱՏՈՒԻՐԱՎՈՒԹԻՒՆԸ ԱՅՑԵԼԵՑ Կ. ՍԸՐԻ

Քըրնեթ Շեհուանի Հանդիպումէն պատուիրակութիւն մը, որուն մաս կը կազմէին Փիեռ Ժեմայէլ, Նայլա Մուսուատ, Ֆարէս Մուսայր, Անթուան Ղանէմ եւ Սալիհ Հընէյն, երէկ այցելեց երեսփոխան Կապրիէլ Մըրի գրասենեակը, որ կը գտնուի «Էմ. Թի. Վի.» կայանի շէնքին մէջ, Էշրեֆիէ:

Երեսփոխան Նայլա Մուսուատ յայտնեց, որ Կապրիէլ Մըր երեսփոխան է եւ անոր կ'արգիլուի այցելուներ ընդունիլ, իսկ այցելուներէն կը պահանջուի անուն արձանագրել թէ՛ մուտքի եւ թէ՛ ելքի ժամանակ: Մուսուատ նշեց, որ խորհրդարանի նախագահ Նեպիի Պրրիիին պահանջած են տէր կանգնիլ օրէնքին եւ խորհրդարանական իրաւատուութիւններուն: Իր կարգին, երեսփոխան Պուրոս Հարպի հեռաձայնային հաղորդակցութիւն մը ունեցաւ Պրրիի հետ եւ բողոքեց, որ պահանջակցութիւնը կ'արգիլէ, որ այցելուներ տեսակցին Սըրի հետ:

Հարպ Պրրիիին պահանջեց արագօրէն միջամտել լուծելու համար նշեալ հարցը: Միւս կողմէ, նշուեցաւ, որ խորհրդարանի նախագահը պահանջած է ներքին գործոց նախարար Էլիաս Մըրիին, որ լուծէ այս հարցը: Մըր խոստացած է, որ շէնքին մէջ գտնուող բոլոր գրասենեակներուն այցելուները որեւէ հարց պիտի չունենան այսուհետեւ:

السفير السفير السفير السفير السفير

ԻՆՉ ԿԸ ԳՐԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐԹԵՐԸ

11 Սեպտեմբեր 2001ի ահաբեկչական արարքները եղան գլխաւոր նիւթերը, որոնց անդրադարձան լիբանանեան օրաթերթերը երէկ:

Անոնք նաեւ խմբագրականներով, վերլուծական եւ մեկնաբանական յօդուածներով լուսարձակի տակ, առած են ահաբեկչական այդ արարքներուն հետեւումները, միջազգային եւ Միացեալ Նահանգներու կացութիւնը: Թերթերը նաեւ կեդրոնացած են Խորայի վարչապետ Արիէլ Շարունի Լիբանանի ուղղած սպառնալիքին եւ Խորայի կացութեան վրայ: «Լիուս» օրաթերթը գրած է, թէ Միացեալ Նահանգներ 11 Սեպտեմբերը վերաբերեալ Ուաշինգտոնի շուրջ պաշտպանողական իրօթիներ վետեղելով, ձոր Պուշ կ'ըսէ, թէ նոր յարձակումներու մասին եղած տարածայնութիւնները լրջօրէն նկատի կ'առնուին եւ աշխարհի տարածքին անբրկեան բոլոր դեսպանատուները շուրջապատուի օր փակ կը պահեն իրենց դռները, իսկ փոխ նախագահ Տիք Չէյնի կրկին գաղտնի թաքստոնց մը կ'ապաստանի: «Տիար» նշած է, թէ 11 Սեպտեմբերի տպաւորութիւնը անոր հետեւի օրէնքի սահմաններէն անտարսանած ճնշին:

մէջ ձոր Պուշ յայտարարած է. «Այսօր իրարու դէմ կը դնեն բռնութիւնը եւ քաղաքակրթութիւնը»: Թերթերը կը նշէ նաեւ, թէ լարուած վիճակ մը կը տիրէ Միացեալ Նահանգներուն մէջ եւ անկէ դուրս: Երկրին արդարութեան նախարարը յայտնած է, թէ մեծ հաւանականութիւն կայ ահաբեկչական արարքներու կրկնութեան:

Շարունի Լիբանանի ուղղած սպառնալիքներուն մասին «Նահար» գրած է, թէ Արիէլ Շարունի Լիբանանի ուղղած սպառնալիքին եւ Խորայի կացութեան վրայ: «Լիուս» օրաթերթը գրած է, թէ Միացեալ Նահանգներ 11 Սեպտեմբերը վերաբերեալ Ուաշինգտոնի շուրջ պաշտպանողական իրօթիներ վետեղելով, ձոր Պուշ կ'ըսէ, թէ նոր յարձակումներու մասին եղած տարածայնութիւնները լրջօրէն նկատի կ'առնուին եւ աշխարհի տարածքին անբրկեան բոլոր դեսպանատուները շուրջապատուի օր փակ կը պահեն իրենց դռները, իսկ փոխ նախագահ Տիք Չէյնի կրկին գաղտնի թաքստոնց մը կ'ապաստանի: «Տիար» նշած է, թէ 11 Սեպտեմբերի տպաւորութիւնը անոր հետեւի օրէնքի սահմաններէն անտարսանած ճնշին:

«Տիար»-ի համաձայն, պատասխանելով Շարունի կողմէ պատերազմի սպառնալիքին, Հըրպայլա կը յայտարարէ, որ Ուաշինգտոնի շուրջապատուի օրէնքը կը հոգով իրարայեան միջամտութեան պարագային դիմադրուի: «Կիտի կորէ» Խորայի վերաբերեալ: «Լիուս» նշած է, թէ Լիբանանի դէմ պատերազմի մասին Շարունի կողմէ զեղծութիւններ կը արարուին:

«Տիար» նշած է, թէ նախագահ Լահուտ կը յայտարարէ, որ պատուութիւններու խափանման վախ չկայ, պայմանաւ որ պատուութիւնը մնայ օրէնքի հոգով իրարայեան միջամտութեան պարագային դիմադրուի: «Կիտի կորէ» Խորայի վերաբերեալ: «Լիուս» նշած է, թէ Լիբանանի դէմ պատերազմի մասին Շարունի կողմէ զեղծութիւններ կը արարուին:

Շար.ը՝ էջ 10

ԹԻՉՆՈՑ ԲՈՅՆ

ԽԱՉԻ ԱՆԴԱՍՏԱՆ ԹԱՓՕՐ

Ուրախութեամբ կ'ուզենք յայտնել, որ ինչպէս ամէն տարի, այս տարի եւս, Կիրակի, 15 Սեպտեմբեր 2002, երեկոյեան ժամը 7:00ին, Ռազմաբարձի տօնին առիթով, տեղի պիտի ունենայ խաչվերացի Աճղաստան Թափօր, Թաչնոց Բոյնի Ա. Գայիանէ եկեղեցւոյ կից դաշտին մէջ:

Արարողութեան իրենց մասնակցութիւնը պիտի բերեն Դպրեվանքի սարկաւազաց դասը, ուրարակիրներն ու տիրացուները:

Կը հրաւիրենք հայ ժողովուրդի բոլոր գաւակները՝ ներկայ գտնուելու տոյն հոգեպարար արարողութեան հաղորդուելու օրուան խորհուրդով եւ ներշնչուելու Քրիստոսի փրկական Ա. խաչով:

Արարողութեան ընթացքին տեղի պիտի ունենայ մոմավառութիւն, բոլոր հաւատացեալներուն մասնակցութեամբ:

ՏՍՕՐԵՆՈՒԹԻՒՆ
ԹՈՉՆՈՑ ԲՈՅՆ

ԱՁԳ. Ս. ՔԱՆԱՍՆԻՑ ՄԱՆԿԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆ ՎԵՐԱՄՈՒՏ

Ազգ. Ս. Քառասնից Մանկանց վարժարանի տնօրէնութիւնը այսու կու գայ յայտնելու, որ 2002-2003 կրթական տարեշրջանի արձանագրութիւնները, հին ու նոր աշակերտներու համար կը շարունակուի ամէն օր, առաւօտեան ժամը 9:00էն 12:00, բացի Շաբաթ օրերէն: Դիւրանքներու համար վերամուտի աշխատանքները՝ ծնողներէն կը խնդրուի արձանագրութիւնները կատարել մինչեւ Չորեքշաբթի, 20 Սեպտեմբեր 2002:

1.- Նորեկ աշակերտները պարտին իրենց հետ բերել «Իխրած քայլ», նախորդ տարուան վիճակագրուելու եւ փոխանցման գիր՝ վաւերացուած կրթական նախարարութենէն (իֆաւտ):

2.- Վերաքննութիւնները (Գ. Ե. եւ Ձ. դասարաններուն համար) տեղի կ'ունենան հետեւեալ թուականներուն.
Երկուշաբթի, 23 Սեպտեմբեր 2002 - հայերէն եւ հայերէնով դասաւանդուող միւթեր:
Երեքշաբթի, 24 Սեպտեմբեր 2002 - արաբերէն եւ արաբերէնով դասաւանդուող միւթեր:
Չորեքշաբթի, 25 Սեպտեմբեր 2002 - անգլերէն:
3.- 2002 - 2003 կրթական տարեշրջանի վերամուտ

• Չորեքշաբթի, 2 Նոյեմբեր 2002 - նախակրթարան:
• Հինգշաբթի, 3 Նոյեմբեր 2002 - մանկավարտէս:

ՏՍՕՐԵՆՈՒԹԻՒՆ

ՈՒԱՇԻՆԿԹԸՆ ԼԻԲԱՆԱՆԻ ԻՆՔՆԱԶՍՊՈՒՄ ԿԸ ՊԱՀԱՆՁԷ

Միացեալ Նահանգներու դեսպան Վինսընթ Պէթլը երէկ այցելեց խորհրդարանի նախագահ Նեպիի Պրրիիին, անոր փոխանցելու համար Ուաշինգտոնի պատգամ մը, թէ պէտք է հանդարտեցնել կացութիւնը եւ ինքնապատուի դիմել Խորայի հետ Ուաշինգտոնի Հասպանի գետերու ջուրի հարցով:

Պրրիի Պէթլի ըսաւ, որ ինքնապատուի պէտք է պահանջել արհեստը եւ նպաստել վորավարէ մը եւ ոչ թէ ջուրի ծարաւ լիբանանցի ժողովուրդին: Ան կ'ակնարկէր Խորայի վարչապետ Արիէլ Շարունի սպառնալիքներուն: Խորհրդարանի նախագահը նկատել տուաւ, որ Խորայի այդ գետերու ջուրերէն կը ստանայ տարեկան 150 միլիոն խորանարդ մէթր, առանց հաշուելու 1967ին ի վեր Մապրեի Շրպայի ջուրի բռնագրաւումը, մինչ Լիբանանի ջուրի նոր ծրագրներով պիտի օգտուի իր արդար իրաւունքի մէկ տասնըինգրորդէն միայն: «Այ ի՞նչ չափանիշով Խորայի իրաւունքներ կը պահանջէ, երբ միջազգային օրէնքը, շրջանային համաձայնագրիները եւ տեղական օրէնքները կը հաստատեն, որ Լիբանանն է որ իրաւունքներ ունի, եւ Խորայի ոչ մէկ առարկութիւն կրնայ ընել», հարց տուաւ Պրրիի:



ՄԵՍՐՈՊԵԱՆ ԱՐՈՒԵՍԻՑ ՎԱՐԺԱՐԱՆ ՉԵՐ ԱՄԵՆԱՄՕՏԻԿ ԹԵՐՆԻԲԸՆ ՎԱՐԺԱՐԱՆԸ

ՄԵՆՔ ԿԸ ԳՆԱՀԱՏԵՆՔ
ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐՈՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ
ՀԱՆՐԱՅԻՆ ԿԵԱՆՔԻՆ
ԲՈՂՈՐ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ
յատուկ պեղջեր հայկական կազմակերպութիւններու անդամ ուսանող-ուսանողու հիւնդուին

- Թէքնիքըլ Պարալորիա BT • LCCIEB Business Մասնագիտութիւններ
- Թիքթիքիկ IATA • Անգլերէն եւ 8 օտար լեզուներ
- Computer Software Programs, Internet • Համակարգիչի, Հեռախօսի, Ռատիոյի եւ Կիւտիոյի Նորագութիւն • Վարայարարում
- Դիմայարդարում • Ոսկերչական Չեւաւորում, Մոմի
- Կաղապարաշինութիւն, Ադամանդաշարութիւն եւ Թանկարժէք Հարերու Մասնագիտութիւն • Ինքնաշարժի Էլեկտրականութիւն եւ Էլէքթրոնիքս

Արձանագրութիւնները սկսած են Կրթաշրջանի սկիզբը՝ Հոկտեմբերին

Հայ Կաթ. Մեսրոպեան Արուեստից Վարժարան, Պ. Համուտ, Արաքս Փ., հեռ. 280504
www.mesrobian.com

ՏՕՆ ԽԱՉՎԵՐԱՅ ԵՒ ՄԱՏԱՂՕՐԸՆԷ

ԶԱԼՔԱՅԻ ՍՈՒՐԲԵ ԽԱՉ ԵԿԵՂԵՑԻՒ
ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ

ԱՄԵՆ. ԵՒ ԳԵՐԸ. ՏԵՐ ՏԵՐ ՆԵՐՍԵՍ ՊԵՏՐՈՍ ԺԹ.

Կաթողիկոս - պատրիարք
Տաճն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց

Հայրապետական Սուրբ պատարագ պիտի մատուցանէ եւ անոր պատշաճի բարոզ Կիրակի, 15 Սեպտեմբեր 2002, առաւօտեան ժամը 10:30ին:
ԵԱՆՕԹ. Երկուշաբթի, 16 Սեպտեմբեր 2002, Օր Մեղեցոց: Ս. պատարագ Ս. Խաչ եկեղեցւոյ մէջ, առաւօտեան ժամը 8:00ին:

ՀԱՅ ԱՒԵՏ. Փ. ԵՒ Ե. ԹՈՐՈՍԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Տորա - Ամանոս ՎԵՐԱՄՈՒՏ

Առ Աստուած երախտագիտութեամբ լեցուած, նախորդ տարուան համար, ու դարձեալ Բարձրեալը ունենալով մեր միակ յոյսը, կը համարակալկից սկսի ճոր տարեշրջանի մը, տալու հայ ազգի գաւակներուն հայեցի ու քրիստոնէական դաստիարակութիւն: ՎԵՐԱՔՆՆՈՒԹԻՒՆ
Երկուշաբթի, 16 Սեպտեմբեր 2002, ժամը 10:00ին - լեզուներ
Երեքշաբթի, 17 Սեպտեմբեր 2002, ժամը 10:00ին - ուսողութիւն
Չորեքշաբթի, 18 Սեպտեմբեր 2002, ժամը 10:00ին - այլ միւթեր
ՄԵՉԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ
Արձանագրութիւնները հին եւ նոր աշակերտներու համար սկսած են արդէն եւ կը շարունակուին մինչեւ 27 Սեպտեմբեր Երկուշաբթի Ուրբաթ կեսօր առաջ ժամը 8:00- 12:00: Նորեկ աշակերտներ պարտին ներկայացնել.
- Դիմումագիր
- 2 լուսանկար
- Անձնագրի լուսապատճեն
- Նախորդ վարժարանի միջերը եւ պետական թիւը
- Բարի վարուց վկայագիր
ՎԵՐԱՄՈՒՏ
Պրոպոզի դասարան - 16 Սեպտեմբեր, առաւօտեան ժամը 8:00:
1- 8 կարգեր - 30 Սեպտեմբեր, առաւօտեան ժամը 7:30:
Մանկավարտը - 2 Նոյեմբեր, առաւօտեան ժամը 8:00:
Վարժարանի հոգաբարձութիւնն ու տնօրէնութիւնը կը խորհուրդէն պրոպոզի դասարանի յաջողած աշակերտները եւ անոնց ծնողները:

ՏՍՕՐԵՆՈՒԹԻՒՆ

ՍՈՒՍԱ ԼԵՐԱՆ ԵՐՈՍԱՄԱՐՏԻ 87ԱՄԵԱԿ

ԼՌԱԿԵԱՑ ՄԱՐՏԻԿԸ
ՄԱՐԿՈՍ ՍՆԱՊԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Քաղ մարդուն համար հասարակ բան է քաղու- թիւնը, ինչպէս հերոս մարդուն համար՝ հերոսութիւնը:

Ահա հասարակ այս մարդոց մէջ է Մուսա Լե- րան Պիթիաս գիւղէն Մարկոս Սնապեանը: «Խաղաղ շրջաններու անհունօրէն բարի այս մարդը, փոքր կոտ օրերուն վերածուած էր մոնղոլ ափի ու թա- քին ծանրութեամբ սար- սած էր թշնամին: Յանգումութեան ու բարութեան այս միասնու- լումով՝ ազգային հե- րոսներու իսկական տի- պար մըն էր ան: Այս հե- րոսն է, ահաւասիկ, որ փստուանքով ու կսկի- ծով կը յանձնենք հողին: «Կը խոնարհիմք ազ- գանուէր մեծ գործին առջեւ այն հերոսներուն, որոնց օրինակելի մէկ տիպարն էր այս մեծ լուկեացը: «Ուրիշներ պատմեցին իմ մասին: Ուրիշներ խեցիմք հե- րոսական իր խոյանքներուն պատմութիւնը: Ինք մնաց միշտ նոյն լուկե- ացացը, ու իր լուրսեան չափ եղաւ մեծ»:

Այս խօսքերը՝ Հ. Յ. Դ. «Կարմիր Լեռ» կոմիտէին կողմէ խօսուած դամբանական էն, 6 Յունիս 1971ին: Արդարեւ, Հ. Յ. Դ. Դանակցութեան «Կար- միր Լեռ» կոմիտէին ներ- կայացուցիչը, անդադ- դառնալէ ետք Մարկոս Սնապեանի ազգային գործունէութեան, կը հաստատէ նաեւ հետեւե- ակը:

«Մարկոս Սնապեան քաջ եւ հոգեկան վսեմ բարեմասնութիւններով ստուած, առանձնաշա- տուած, կարողացած ան- մըն էր, որ 1915ի մեր քառասորեայ գոյա- պայքարին ընթացքին, իրբեք քաջարի մարտին, իր գեղքի ընկերներուն հետ, կրցաւ անողորմ հարուածներով յուսա- արժանաւոր զինուոր մը նաեւ Արեւելեան Բանա- կի հայկական լեզուին մէջ, եւ 60 տարիներ, հաւատարմօրէն եւ անձուարկութեամբ ծա- ռայց Հ. Յ. Դ. դրօշին տակ վերածնող իր սիրե- լի ազգին»:

Այս քանի մը յատկա- նիչներուն մասնանշու- մով, Հ. Յ. Դ. Դանակցու- թեան կոմիտէին կը ներ- կայացնէ իր մարտիկնե- րէն մէկը՝ հաւատաւոր եւ լուր գործող Մարկոս Սնապեանը, Մուսա Լե- րան անուանի ղեկավար- հերոս Սովակ Տէր Գա- լուստեանի անմիջական գործակիցներէն մէկը:

Ո՞վ է Մարկոս Սնապե- ան: Ան Մուսա Լերան Պի- թիաս գիւղէն էր: Երիտա- սարդ տարիքին զինուոր- րազորուծ Հայ Յեղափո- խական Դանակցու- թեան: Երիտասարդու- թիւնը եւ ժողովուրդը զի- նելու ջերմ կողմնակից- ներէն եւ անողմնակիցն է, որ «Կրա» արագահար- ւած հրացանը գիւղ կը բերէ: Իր եւ իր ընկերնե- րուն ջանքերուն շնորհիւ (Յակոբ Գալանեան, Գե- ռորդ Չափարեան, Գրիգոր Քէշիշեան) կը յաջողին Պիթիասի մէջ ունենալ 17 «Կրա» հրացաններ՝ իւ-

րաքանչիւրը 25 փամփուռ տոզով: Այս զէնքերը հե- տագային 40 օրե- րու հերոսական ղեկավարութեան ընթացքին բաւա- կան օգտակար պիտի դառնային:

1911ին, թրքա- կան ընկերներ կողմէ կը զօրա- կոչուի, սակայն, ան կը մերժէ ըն- դառալել զինա- կոչին ու իբրեւ փախուտակ է («Ֆիւրա») կ'ապաստանի լե- ուր: Չորս տարի կը մնայ լեռան վրայ՝ իբրեւ փախուտ- կան:

Չորս հոգինոց խում- բէն Գրիգոր Քէշիշեան Ամերիկա կը մեկնի, իսկ Գեորգ Չափարեան ու Յակոբ Գալանեան կը զօրակոչուին թրքական բանակ: Այս երեքին զէն- քերը իրեն կը յանձնուին: Երբ լեռ կը բարձրանան, զէնքերը կը յանձնէ իր խօսքերով «անոնց գոր- ծածոթեան ծանօթ ու սրտոտ տղոց»՝ Յովհան- նէս Գրլըճեանին, Մա- նուկ Գրլըճեանին եւ Յով- հաննէս Սթամպուլեան- ին:

Այդ օրերուն գոց պա- հարան մը կու գայ Պի- թիաս, եւ անոր կցուած հրահանգ մը՝ 8 օրէն պատաստուիլ եւ գաղ- թել պետութեան նշանա- կած վայրերը:

«Զինուորութեան խոյաւորած եւ զիւլ վե- րադարձած երիտասարդ- ները, ինչպէս Գեորգ Գրլըճեան, Մանուկ Գր- լըճեան, Խուլվաքեյը, Ասատուր Սթամպուլե- ան, Կարապետ Գատըլե- ան եւ ուրիշներ լուր կը բերեն, որ հայ ժողով- րդուը, ամէն տեղ, կը հանեն իր տուներն ու տե- դէն եւ ճամբաներուն վրայ կը չարչարեն ու կը կոտորեն: Փախուտակ զինուորներուն բերած չարադէտ լուրերը իմա- ցալե ետք, զինեալներս եզրակացուցինք, որ հոս պիտի մեռնինք, բայց գաղթելու հրահանգին պիտի չենթարկուինք», ինչպէս կը պատմէ ինք:

Լեռան վրայ կը կազ- մուին յատուկ խումբեր (չէթէ), լաւ կուտող ու կրակի առաջին զինուոր- վրայ նետուելու պատ- րաստ մուսայեռնիներ: Չէթէական չորս խումբե- րը ունէին 40 կուտողներ: Պիթիասէն չորս չէթէնե- րը կ'ըլլան Առաքեալ Պղլէշեան, Գեորգ Գրլըճե- ան, Մանուկ Գրլըճեան եւ Մարկոս Սնապեան: Ան կը մասնակցի Մուսա Լերան քառասորեայ հե- րոսամարտին՝ իբրեւ ան- վախ մարտիկ եւ իր մաս- նակցութիւնը կը բերէ հերոսական կոչումներուն՝ քաջաբար, ինչպէս վայել է իր նմաններուն: Եւ ճիշդ կ'ըսէ Մուսա Լերան կուտողներուն մասնակցած թուրք գոնեալը Մուսթա- ֆա էֆենտին. «Ինչո՞ւ՝ ալային փոքր ջոկատնե- րը նախապէս չըռնեցին այն քանի մը փոքր կիր- ճերը, դուռները, ուրկէ լեռ պիտի բարձրանային գիւղացիները: Կարծե- ցին, թէ քաղքէնի, թուր- լամբի ու քնացող հայե- րուն հետ էր իրենց գոր- ծը»:

Մարկոս Սնապեան ու Այնցաբ



Մարկոս Սնապեան լեռան վրայ (Լուսանկար՝ ՄՈՎՍԵՍ ՏԵՐ ԳԱՆՈՒՍԵԱՆԻ)

իր մարտական գաղափա- րական ընկերները, հե- րոսներ էին սակայն, որովհետեւ հերոսներուն համար շատ հասարակ բառ է հերոսութիւնը:

Եւ արդար է հարկու- րապետ Մահմուտ պէյը, երբ կ'ըսէ. «Եթէ ապու- տամները լեռնականի առողջ բնազդին ու որ- օտորի վարժ ուզովաբար- րութեան հետ ունենային նաեւ կանոնաւոր զէնք եւ առատ զինամթերք, մեզմէ ոչ ոք ողջ չլուրձը- րի՞ս»:

Իսկ արդիւնքը՝ քա- ջութիւն է, հերոսու- թեան, քառասորեայ հե- րոսամարտը եւ հայու վճռական հարուած:

Երբ Ֆրանսական մար- տանաւերու պատասխա- նաբունները կը մերժեն չէթէներու առաջարկը (զինամթերք տրամադ- րել, որպէսզի իրենք հոն մնան եւ հայրենակային կուրբերով շարունակեն պայքարը թուրք բանա- կին դէմ), մուսայեռնիք կը տեղափոխուին Փոր Մայիտ: Հոս է, որ շուրջ 600 կուտողներով մուսա- լեռնիքը կորկը կը կազ- մեն Արեւելեան Բանա- կին, եւ փառաւոր յաղ- թանակ մը կը տանին Պա- դեստանի Արարայի ճա- ղ կուտողներուն կարգին էր նաեւ քաջաբար կուտող Մարկոս Սնապե- անը:

1923ին կը կազմէ իր քոչը՝ Մարիամ Քէշիշե- անի հետ, եւ կ'ապրի միշտ հարազատ իր գիւ- ղացիներուն հետ, Պի- թիասէն մինչեւ Այնճար:

Այսօր դարձեալ Սեպ- տեմբեր է, եւ համայն հայրենիւն ու մասամբ աշխարհի տարածքին զտնուող մուսայեռնի- րը պիտի վերջիւնէ իրենց հերոսները, Մուսա Լեռը, հերոսամարտը եւ պիտի խոնարհին հերոսներու յիշատակին: Գեղեցիկ նախաձեռ- նութեամբ մը, Մարկոս Սնապեանի թուները (Կա- լինէ, Թամար եւ Գալէ Պ. Սնապեաններ), այլով մը կը հրատարակեն իրենց մեծ հօր՝ Մարկոս Սնապե- անի եւ իր մարտական ու գաղափարական ըն- կերներու յիշատակին: Առիթն է դարձեալ, որ կարողանք մեր հերոսնե- րու մասին եւ անմար պահենք մեր մէջ հերոս- ներու ոգին, որ ազգի մը դժուար օրերուն փրկու- թեան միակ էլքն է:

ՀԱՅՐԵՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԱՆՅՈՒԴԱՐՁԵՐ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇՆԱՆԱՅԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԲԱՑՈՒՄ

Թէեւ անցնող նստաշրջանի աւարտին ընդդիմու- թիւնը տրամադրութիւն յայտնած էր նաեւ աշնանա- ին նստաշրջանին գրաւած պահելու Հայաստանի Ազ- գային ժողովի ամպիոնը, այսուհանդերձ, Հայաս- տանի Ազգային ժողովի նոր նստաշրջանը սկսած 9 Սեպտեմբերին, բնականոն հունով եւ ընթացաւ օրա- կարգային հարցերու քննարկումով: Ընդդիմադիր 28 պատգամաւորները, սակայն, յայտարարեցին, որ պի- տի շամանակին խորհրդարանական քուէարկութիւն- ներուն:

Պատգամաւորներուն մտահոգութիւն պատճառեց այլ հանգամանք մը եւս, երբ նկատեցին, որ Ազգային ժողովի նիստերու սրահի դուռներուն հսկող ոստի- կանները քաղաքային նոյնանման հագուստներ հա- գած էին եւ ոչ թէ ոստիկանական համազգեստներ: Այս մասին Ազգային ժողովի նախագահ Արմէն Խա- չատրեան ըսաւ, թէ նշեալ անհասկացող Ազգային ժո- ղովի ապահովութեան համար են՝ Ազգային ժողովի եւ ներքին գործոց նախարարութեան միջեւ կնքուած պայմանագրի չհիմամբ: Պատգամաւորները նաեւ չկրցան ստանալ ճշգրիտ պատասխան իրենց այն հար- ցումին, թէ ինչո՞ւ կ'արգելուի նաեւ լրագրողներու ազատ էլքն ու մուտքը: Լրագրողներուն արգելուած էր դուրս ելլելէ ետք վերադառնալ նիստերու դահլիճ:

ԲԱՇԽՉ ՅԱՆՅԵՐՈՒ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՈՒՄ

Հ. Յ. Դ. ԴԵՄ ՔՈՒԷԱՐԿԵՑ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՕՐԻՆԱԳԻԾԻՆ

Հայաստանի Ազգային ժողովի Հ. Յ. Դ. խմբակ- ցութեան ներկայացուցիչ Աղուան Վարդանեան մա- մուլին յայտնեց, թէ «Հայաստանի ելեկտրական բաշ- խիչ ցանցերու մասնաւորեցումն այլընտրանք չունէր, որովհետեւ այդ համակարգը կ'ստանալ մարմինին անընդհատ «արնահոսութեան» կենթարկէր. տարե- կան այստեղ կը կորսուէր 50-60 միլիոն տոլար, եւ այդ վիճակը լուծել կարելի չէր»: Ըստ պատգամաւորին, պետութեան կարելիութիւնները բաւարար չէին՝ ելեկտրական բաշխիչ ցանցերու մարզին մէջ ներ- դրումներ կատարելու՝ համակարգի նորացման նպա- տակով, սակայն նաեւ «կառավարութիւնը այս կա- րելու գործարքին մէջ տեսակ մը հապճեպութիւն ցու- ճեցե՞րք եւ միայն ժամանակը զոյգ պիտի տայ՝ թէ՛ ցործանով անիկա արդիւնաւէտ էր: Կը մնայ յուսալ, որ ուժանիւթի յանձնախումբի եւ կառավարութեան լաւատեսական ակնկալիքները կ'իրականանան», աւելցուց Հ. Յ. Դ. խմբակցութեան ներկայացուցիչը: Ա. Վարդանեանի խօսքերով, թէեւ Հ. Յ. Դ. դէմ չէր բաշխիչ ցանցերու սեփականաշնորհման, սակայն այդ օրինագիծին մէջ կառավարութեան կողմէ կատար- ւած կարգ մը փոփոխութիւններու պարագային սկզբունքային հարցերու գծով համաձայնութեան չե- կան կառավարութիւնը եւ կուսակցութիւնը եւ Դան- ակցութիւնը դէմ քուէարկեց նշեալ օրինագիծին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՄ ԹՐՔԱԿԱՆ ՆԵՐԽՈՒԹՈՒՄ ՄԸ ԿԱՆԽՈՒԱԾ Է ԽԱՍՊՈՒԼԱԹՈՎԻ ԱՆԿՈՒՄՈՎ

Հայաստանի մէջ Յունաստանի նախկին ղեկավար Լեոնիտա Քրիստոսոփուլոս գիրք մը հրատարակած է Հայաստանի իր պաշտօ- ցավարման տարիներուն մասին: Կոմիտաս հիմնարկի հրատարակութեամբ լոյս տեսնելիք (19 Սեպտեմբերին հրատարա- կի վրայ պիտի ըլլայ) գիրքին մէջ հեղինակը կը խօսի 1993ին մէկ կողմէ Ելցիցի եւ միւս կողմէ Ռուսոյի ու խորհրդարանի նախագահ Ռուսլան Խասպուլաթովի միջեւ եղած բախու- մին մասին: Յունաստանի ղեկավարը կը պնդէ, թէ Թուրքիա չէզէն Ռուսլան Խասպուլաթովին հետ գոյացուցած էր համաձայնութիւն մը, որուն համաձայն Ռուսիա իր գործը պիտի հե- ռացներ Հայաստան: Թուրքիա սահմանափակեց եւ Թուրքիա պիտի ներխուժէր Հայաստան ու Վրաստան: Յոյն ղեկավարը իր այս պնդումը կը հիմնէ գաղտնի սպասարկութեան ունեցած իր տեղեկութիւններուն, ինչպէս նաեւ Ֆրանսա- յի եւ Միացեալ Նահանգներու ղեկավարներուն հաղորդումներուն վրայ: «Ֆրանսայի ղեկավա- րը 11 Հոկտեմբերին ինձի ըսաւ, թէ ֆրան- սական գաղտնի սպասարկութեան աղբիւրնե- րը կը յայտնեն Խասպուլաթովի (չէզէն իսլամ) եւ Անգլայի միջեւ գոյացած համաձայնու- թեան մը մասին, որուն համաձայն եթէ ան յարթ առիթ պիտի ընձեռնէ Թուրքիոյ, որ սահ- մանափակ տարողութեան ներխուժում մը կա- տարէ Հայաստան՝ քրտական հարցը պատճա- րաբանութիւն Արթուրի: Հայաստանի մէջ քրտական ներխուժումը, ըստ ֆրանսական աղ- բիւրներու, պիտի իրականանար անմիջապէս երբ Խասպուլաթով ուսակաւ ուժերը հե- ռացներ Հայաստան: Այս տեղեկութիւնը հե- տագային հաստատեց ամերիկացի իմ գործըն- կերս», կը գրէ Լեոնիտա Քրիստոսոփու- լոս:

ՇՈՒԹԻ «ՎԱՐԱՆԱ» ԵՐԳՉԱՆՈՒՄԻ ՏԱՄԱՍԵԱԿԻ ՆՈՒՄ

ՆԱԽԱԳԱՀ ՂՈՒԿԱՍԵԱՆ ՊԱՐԳԵՒԱՏՐԵՑ ԶԱՔԱՐ ՔԵՇԻՇԵԱՆԸ

6 Սեպտեմբերի երեկոյեան Ստեփանակեր- տի սպայի տան մէջ տեղի ունեցաւ Շուշիի «Վարանգա» մանկապատանեկան եւ երիտա- սարդական երգչախումբի տասնամեակի յոբե- լեցական հանդիսութիւնը:

Աւելի քան 120 մանուկներ, պատանիներ եւ երիտասարդներ գեղարուեստական բարձր մա- կարդակով կատարեցին դասական եւ ժամանա- կակերտ՝ ղեկավարութեամբ խումբի հիմնա- դիր եւ ղեկավար Զաքար Քէշիշեանի:

Համերգ - հանդիսութեան ընթացքին Լեո- նային Արարաղի Հանրապետութեան նախա- գահ Արկայի Ղուկասեան բարձր գնահատելով Զաքար Քէշիշեանի ցերեղումը Արցախի երաժշտական կենտրոնի եւ մանուկներու դաս- տիարակութեան աշխատանքին մէջ, անոր շնորհեց մշակույթի եւ կրթութեան կապանոք գործիչներուն տրուող «Վաչագան բարե- պաշտ» մետալը:

Շնորհակալութեան խօսքով հանդէս գալով Զ. Քէշիշեան ըսաւ. «Արցախի մէջ մետալ ստանալու համար պէտք է ծառայել կենտրոնով կամ ամբողջ կենտրոն ընթացքին: Այս շքանշա- նը կ'ուզեմ կիսել Արցախի բոլոր մշակութա- յին գործիչներուն եւ դժուար օրերուն Արցա- խը չլքող իւրաքանչիւր արցախցիի հետ»:

Համերգը 7 Սեպտեմբերին կրկնուցաւ Շու- շի քաղաքի մէջ, եւ արժանացաւ շուշեցիներու գնահատանքին:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԴԻՒԱՆԱԳԷՏ ՆԻՔԸԼԸՍ ՏԻՆ ԱՅՅԵԼԵՅ ԱՆԱԼՔԱԼԱՔ

Ուրբաթ, 30 Օգոստոսին Ախալքալաք այցելեց Վրաստանի մէջ Միացեալ Նահանգներու ղեկավարու- տան քաղաքական եւ տնտեսական գործերով խորհրդ- դական Նիքըլըս Տին: Ան հանդիպումներ ունեցաւ Ախալքալաքի ցրվանային Վարչութեան ներկայացու- ցիչներուն եւ «Վիքը» կուսակցութեան ղեկավարու- թեան հետ: Պատասխանատուներուն հետ զրոյցներու ընթացքին ամերիկացի դիւանագէտը ծանօթացաւ Զաւախի հիմնախնդիրներուն: Բացի գործնական հանդիպումներէ, Նիքըլըս Տին այցելեց նաեւ Զաւախ- քի գեղատեսիլ վայրերը եւ հիացաւ Թմկարձիճի ու Վարձիայի գեղեցկութեամբ:

ՇՕՒՆ ԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԻ ՀԱՍԱՁԱՅՆ

ՄԱԿԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒԱԾ ՏՈՒԵԱԼՆԵՐԸ ՈՐՈՇ ԶԱՓՈՎ ԽԵՂԱԹԻՒՐՈՒԱԾ ԵՆ

«Նիւթական նպաստ ստանալու ակնկալութեամբ Հայաստանի մէջ գործող հասարակական կազմակեր- պութիւններու մեծ մասը իրականութեան չհամապա- տասխանող տեղեկագրիւններ կը ներկայացնէ ՄԱԿին, այդպէսով արտաքին աշխարհին ներկայացնելով Հա- յաստանի ոչ իրական, այլ խեղաթիւրուած պատկե- րը, ըսաւ Հայ օգնութեան միութեան (ՀՕՄ) ղեկերա- յին ծրագրիներու պատասխանատու Աննա Մնացա- կանեան:

Ան նշեց, որ հասարակական կազմակերպութիւն- ներ յատկապէս մարմնավաճառութեան եւ ընտանե- կան բռնութեան վերաբերեալ նիւթերով խեղաթիւր- ուած տուեալներ ներկայացուցած են ՄԱԿին, որուն ցանկին վրայ Հայաստան գրաւած է Վրաստանի հա- ւասար դիրքը, մինչդեռ Հայաստանի մէջ այդ մակար- ղակի հարցերը նոյն սրութիւնը չունին Անդրկովկա- սի որեւէ ուրիշ պետութեան հետ բաղդատած, այլ շատ աւելի մեղմ են: Ա. Մնացականեան նաեւ դիտել տուաւ, որ ընդամենը երկու տարի է, որ Հայաստա- նի մէջ այդ հարցերուն նուիրուած ծրագրիներ կը գործադրուին:

Ա. Մնացականեան նաեւ նշեց, որ ՀՕՄը Մանկա- կան հիմնադրամի հետ միասին սկսած է իրականաց- նել «Ընտանեկան բռնութիւններու ուսումնասիրու- թիւն» ծրագիրը, եւ տուեալները ցոյց կու տան, որ մանուկներու դէմ գործադրուող բռնութիւնը կիներ- րու դէմ արձանագրուած է աւելի ծանրակշիւր եւ Հա- յաստանի մէջ:

Հ. Յ. Դ. ԸՆՈՐՀԱՒՈՐԵՑ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՎԵՐԱՄՈՒՏԸ

Երկուշաբթի, 2 Սեպտեմբերին Քանաքեռ-Չէլջիլուն համայնքի Հ. Յ. Դ. «Արամ Պօղոսեան» կոմիտէի նա- խաձեռնութեամբ տեղի ունեցաւ դպրոցական վերա- մուտի նուիրուած սոսնախմբութիւն: Հանդիսութեան ընթացքին ընդգծուեցաւ գիտութեան կարեւորու- թիւնը. դպրոցականներուն բարի երթ մարտնչելու Հ. Յ. Դ. Հայաստանի Գերագոյն Մարմինի ներկայացուցիչ Ար- մէն Ռուսուսեան: Երոյթ ունեցան համայնքի դպրոց- ներու գեղարուեստական խումբերը: Վերամուտի առիթով աշակերտներուն շնորհաւորեցին նաեւ ծնողներն ու տնօրէնները:

ՎԵՐԱՍՈՒՏԻ ՊԱՏԿԵՐ - Բ.

ՕՏԱՐ ՏԵՍՉԱՐԱՆԻՆ ՄԷՋ

Տիկին Լիլիթ եւ ամուսինը կրցած են «իֆատե»ները ձեռք բերել: Վերջապէս անոնք ալ ազգի գաւակ են եւ ափ առած են օտար վարժարան մը, որուն հռչակը լսած են ոչ միայն պատկերասփիւռներէն, թերթերէն, այլ նաեւ քանի քանի՝ հայ ծնողներէ, որոնք իրենց գաւակներուն «սիւփըր» փայլուն ապագայ ապահովելու համար, դիմած են հոն, օտար վարժարան: Այսպիսիներ, մոռցած իրենց ծնողներուն կամ մեծ ծնողներուն թափած ճիգերն ու ցուցաբերած նուիրումը, ի խնդիր հայ դպրոցին եւ դպրութեան, դիմած են այլ հաստատութիւններ, մոռցնել տալու համար, իրենց գաւակներուն մշտնօրէն անհրաժեշտ «չարչարանք»ները: Հեռու պահելու համար գանոնք վարժարան, Սիւսիանի կամ Պ. Սեւակ կոչող «վտանգաւոր արտերէ»:

Լիլիթ եւ Սերժ սպասման սրահին մէջ աւելի քան ժամ մը սպասելէ ետք, տնօրէնին սենեակը առաջնորդուելու մեծ շնորհին կ'արժանանան: Կ'առաջնորդուին այն գրասենեակը, ուր «ըսթեթ» տնօրէնը կարեւոր ժողով մը կը գումարէր օգնականներուն հետ: Սերժ փորձած էր գանգատիլ, փչել եւ անհանգստութիւն ցոյց տալ: Իրենք, որ հայկական վարժարանի տնօրէնին տասը վարկեանի ուղարկուած չէին կրցած տանիլ, հիմա ի՞նչպէս կը սպասէին «ըսթեթ»ին աւելի քան մէկ ժամ ուղարկումին: Լիլիթ սաստած էր, որ լուրջ, որովհետեւ մարդը ստիպուած էր ուղարկուել գրեթէ: Հոս կարգութիւնը կատակ չէր վերցնէր. յետոյ, իրենց գաւակներուն ապագային համար ի՞նչ էր որ մէկ-երկու ժամուան ուղարկումը...

Ներքո «ըսթեթ» տնօրէնին գրասենեակը վարչապետի մը, գոնէ նախարարի մը գրասենեակը յիշեցնող ճոխութիւնը ունէր: Լիլիթ չկրցաւ իր հիացումը պարտկել եւ կամացուկ մը ամուսինին թելադրեց:

Լիլիթ.- Տես ի՞նչ սքանչելի օֆիս ունի մարդը: Այսպէս կ'ըլլայ տեսչարան ըսածը, ոչ թէ մեր «գաւալը» դպրոցներուն պէս:

Տնօրէն.- Ահլաւ ու սահլաւ, ահլաւ ու սահլաւ պիլ Արմենեան: Հազար բարի:

Լիլիթ.- «Թեք եւ «ըսթեթ», շատ շնորհակալ եմք, «մերսի»...

Տնօրէն.- Տունը ձերն է, մենք երախտապարտ ենք ձեր այցելութեան համար: «Ահլաւ ու սահլաւ», ի՞նչպէս կրնանք ծառայել ձեզի: Ի՞նչ կրնանք ընել: Մենք շատ կը սիրենք ձեր ազգը, որ այնքան աշխատունակ է, պարկեշտ, ճշգրտապահ, հաւատարիմ, մէկ խօսքով, կատարելաբէր էք, ոչ թէ մեզի պէս:

Լիլիթ (ցած ձայնով).- Տեսա՞ր Սերժ, մարդուն բերնէն մեզը կը հոսի. եկուր եւ դիմացիք: «Ըսթեթ», մենք շատ, շատ, շնորհակալ ենք ձեր գովասանքներէն «թեք եւ սա»:

Տնօրէն.- Ասոնք գովասանք չեն, այլ իրականութիւն: Ես շատ մեծ թիւով հայ բարեկամներ ունեցած եմ, յատկապէս համալսարանին մէջ, դուք ուրիշ էք, ի՞նչ ըսեմ, բացարձակ էք:

Լիլիթ (Սերժին).- Լսէ՛, լսէ՛, մարդը որքան շնորհակալ կը խօսի, հապա մերիններուն պէս:

Տնօրէն.- Այո, ի՞նչ կրնանք ընել ձեզի: Կարծեմ կ'ուզէիք ձեր գաւակները...

Լիլիթ.- Այո, եկած ենք մեր գաւակներուն ապագան, փայլուն ապագան ապահովելու համար գանոնք ձեր հոգածութեան յանձնել... «փլիփլի»...

Տնօրէն.- Շատ զգացուած եմ տիկին ձեր վստահութեան եւ մանաւանդ անուշ արտայայտութեան համար: Կրնաք վստահ ըլլալ, որ մեր ձեռքերուն մէջ ձեր գաւակներուն փայլուն ապագան արդէն իսկ ապահովուած է, «սաք փոքրսն»...

Լիլիթ.- Ճիշդ ատոր համար ձեզի եկած ենք, «ըսթեթ» տնօրէն. մեր գաւակներուն ապագան միշտ կը մտահոգէր մեզ:

Տնօրէն.- Այլեւս բնաւ մտահոգուելու պէտք չունիք:

Լիլիթ (ընդմիջելով տնօրէնը).- Երբ մեր գաւակները ձեր խնամքին յանձնուած ըլլան, այլեւս ի՞նչ մտահոգութիւն: Վստահ եմ, որ մեր գաւակները պիտի ըլլան մէկական ընդհանուր տնօրէն, ֆայրիքսֆոր նոյնիսկ երեսփոխան:

Սերժ.- Մենք շատ լաւ բան լսած ենք ձեր հաստատութեան մասին: Իմ դրացիներէս քանի քանի իրենց գաւակները արդէն, տարիներէ ի վեր ձեր մօտ կը զրկեն, եւ միշտ կը գովեն ձեզ:

Տնօրէն.- Օ՛, շնորհակալ ենք, շատ զգացուած ենք, «էրմէն դեյլի». Ես հապի-

պի... Մտտամ, ձեր գաւակները ո՞ր դպրոցը կը յաճախէին ցարդ:

Լիլիթ.- Լեզու չեթար ըսել, բայց ինչ որ է, դուն ըսէ՛, Սերժ: Մեզք որ տարիներով հոն պահել ենք մեր սրտի հատորները: Սերժ.- Մեր ազգային երկրորդական վարժարաններէն մէկը կը զրկէիք:

Տնօրէն.- Ա՛, ես բաւական լաւ բաներ լսած եմ այդ դպրոցին մասին, բայց անշուշտ...

Լիլիթ (ընդմիջելով).- Եթէ լաւ ըլլար, մեր գաւակները չէինք հաներ անկէ: Ձեր դպրոցը բացարձակ է, «ըսթեթ» տնօրէն: Իմ լուսահոգի, մարմնով՝ կեսրայրս այդ դպրոցին հիմնադիրներէն եղած է, ամուսինս ալ տարիներով հոգաբարձու եղած է հոն, բայց հիմա, շատ կը ցաւիմ, որ այդ դպրոցը անարիտի վրայ դրած է վիթխար:

Տնօրէն.- Կը հասկնամ, հիմա օրերը դժուար են:

Լիլիթ.- Մենք մեր գաւակներուն ապագային համար, գիրենք փրկելու համար անաւարակ կը դիմենք ձեզի: Եթէ հոն մնան, մեր ձեռքերը պիտի լուանք մեր գաւակներէն:

Տնօրէն.- Ի՞նչ կ'ըսէք, տիկին Լիլիթ, բայց մենք գիտենք, որ դուք հայերդ բծախնդիր մարդիկ էք, հաւատալս չի գար:

Լիլիթ.- «Հէյտեք քեզ ապրը», այդ ժամանակին էր, երբ լուսահոգի կեսրայրս ողջ էր, այդ դպրոցը մատով կը ցուցնէին. Հիմա, ի՞նչ որ է...

Տնօրէն.- Այո, մեզք է այդ դպրոցին, բայց մենք ձեզի կը խոստանանք ապահովել ձեր գաւակներուն փայլուն ապագան:

Լիլիթ.- Մենք վստահ ենք, ատոր համար փութացած ենք ձեզի:

Տնօրէն.- Հազար բարի, կրնա՞մ տեսնել ձեր գաւակներուն փաստաթուղթերը: «Իֆատե» բերած էք:

Սերժ.- (մեքենաբար).- Այո, բերած ենք...

Լիլիթ.- Անշուշտ որ բերած ենք, ի՞նչ ըսել է: Տնօրէնը տալու միտք չունէր, բայց ես սպառնացի, որ «ուիզարա» պիտի դիմեմ գաւակներուն ապագան խաղալիք չէ, ես...

Տնօրէն.- Լաւ, լաւ, շատ լաւ. նիշերն ալ փայլուն են ձեր գաւակներուն:

Լիլիթ.- Անշուշտ: Արդէն ատոր համար որոշեցինք հոս բերել մեր աչքի լոյսերը, որպէսզի անոնց ապագան չփտանգենք մեր հայկական վարժարանին մէջ:

Տնօրէն.- «Ես լալիք»... ինչ որ է: Հիմա եթէ կ'ուզէք ներս անցնել մեր հաշուապահութեան գրասենեակը, ես կարեւոր ժողով մը ունիմ քարտուղարուհիս հետ: Մեր դպրոցի քաղաքականութիւնը կը վերամշակենք: Կրնաք վստահ ըլլալ, որ ձեր գաւակները շատ ապահով ձեռքերու մէջ պիտի ըլլան:

Սերժ (աչքերը յառած քարտուղարուհիին).- Սա աղջիկը ի՞նչ քաղաքականութիւն պիտի մշակէ, Լիլիթ:

Լիլիթ.- (Յանդիմանական): Խելքդ ատանկ բաներու ե՞րբ հասեր է, որ չե՞ս տեսներ աղջկան աչքերը ի՞նչպէս կը խաղան: Ժարպիկորդի է: Դուն անոր շատ մի նայիր:

Սերժ.- Համաձայն եմ, բայց շատ ճարպիկորդի է, հաւատալ եմ:

Տնօրէն.- Մէկ բան ալ, նկատելով որ մեր աշակերտութեան մէկ երրորդին աւելին հարկեր են, կը ծրարենք հայերէնի դասընթացը հաստատել դպրոցին մէջ, որ գոնէ իրենց մայրենին չմոռնան:

Լիլիթ.- (Ուղղակի շանթարուած) լաւ չհասկցայ, «ըսթեթ-տնօրէն», ականջներս յուսած սխալ լսեք: Հայերէն դասընթացը ըսիք, կարծեմ: Հո՞ս, Ամերիքըն Սի. Թի. էս-ի՞ մէջ:

Տնօրէն.- Այո՛, մատած Լիլիթ, մեր կարծիքով լաւ բան կ'ընենք:

Լիլիթ.- Լսեցի՞ր Սերժ, սա ի՞նչ կրակ է «ըսթեթ-տնօրէն», ձեր զգացումները շատ գնահատելով հանդերձ, կը ցաւիմ ըսելու, որ աւելորդ տաղտուկ կը ստեղծէք, թէ ձեզի եւ թէ մեզի, հայ ծնողներուն համար: Մեր գաւակները հոս բերելուն պատճառներէն մէկն ալ ճիշդ այդ է. մենք չենք ուզեր որ մեր հոգահատորները ծանրաբեռնել աւելորդաբանութիւններով: Ի՞նչ պէտք կայ հայերէնին, թող լաւ սորվին արարներէն, անգլերէն, ֆրանսերէն, եթէ գերմաներէն ունիք մենք պիտի նախընտրենք, որ մեր գաւակներուն այդ լեզուն ալ դասաւանդէք, բայց հայերէն՝ բնաւ, երբեք: Եթէ իսկապէս որոշած էք այդ մէկը ընել, մենք ուրիշ դպրոց կ'երթանք: Դուն ալ բերանդ բաց այ մարդ, Սերժ, չես

լսե՞ր, հայերէն պիտի սորվեցնեն եղբւր. լաւ ես հապիպի: Լսէ՛ բան մը այ մարդ:

Տնօրէն.- Կը տեսնեմ որ շատ անհանգստացաք մտտամ Նորահարուստեան, կը ներհեք, իմա միայն հարցում մըն էր: Յարդ մեր կատարած հարցախոյզէն արդէն իսկ ի յայտ եկաւ, որ վաթսուս չորս ընտանիքներէն միայն երեքը համաձայն գտնուեցան մեր գաղափարին:

Լիլիթ.- Այդ երեքն ալ ապուշներ են կ'երեւի, ի՞նչ ըսել է հայերէն-մայրէն: Եթէ իսկապէս որոշած էք, ես գաւակներս կ'առնեմ կը քալեմ: Մեղա՛յ Տէր. այս ալ լսած չէիք, օտար դպրոցի մէջ հայերէնի դասընթացը: Ես իմ գաւակներու տիպի գործողութիւն ընել տալու միտք չունիմ. պայտուսակները հայերէնի գիրքին ծանրութեանէն ազատ թող ըլլան:

Տնօրէն.- Հանդարտեցէ՛ք տիկին, ինչպէս որ ըսի, մերինը պարզ առաջարկ մըն էր: Դուք հայերդ գործնական մարդիկ էք: Ես հաշուապահուհիին ըսեմ, որ ձեր հայերէններէն, վնաս չունի, մեր կարեւոր ժողովը կրնամ յետաձգել քիչ մը: (Ինքըրֆոնի վրայ կը կանչէ զլրաստոր հաշուապահուհիին, որ ներս կը մտնէ):

ՀԱՇՆՈՒՊԱՆՈՒԿՆԵՐԻ (Մեքենաբարով) Յակոբին թոշակը...

Լիլիթ.- Անձնաթուղթին մէջ անունը Յակոբ է, բայց մենք իրեն ժաք, եղբայրն ալ ժան կը կանչենք:

ՀԱՇՆՈՒՊԱՆՈՒԿՆԵՐԻ.- Ժաքին թոշակը երկու հազար ութ հարիւր տոլար է միայն, արձանագրութիւնը միմիայն երեք հարիւր տոլար, գրեականը՝ երկու հարիւր միայն, պատճ. հազար հարիւր միայն եւ... Գիրքերուն ցանկը կու տանք, որ «Պուք-սթր»էն գնէք:

Սերժ.- (Կը սկսի բորտիլ)՝ Լիլիթ, սա գումարները կը լսե՞մ:

Լիլիթ.- Ի՞նչ կը կարծէիք հապա, ասիկա Ամերիքըն Սի. Թի. էս-ն է սիրելիս, հաւնոցի պէս հայկական դպրոցը չէ:

Տնօրէն.- Սխալ բան մը կա՞յ:

Լիլիթ.- Բնաւ, բնաւ:

ՀԱՇՆՈՒՊԱՆՈՒԿՆԵՐԻ.- Վերջապէս, գանգանքն ալ կայ, որ մեծ բան մը չէ, ընդամենը հինգ հարիւր տոլար է: Հիմա ժանիկ հաշիւը...

Սերժ-Լիլիթ.- Ատոր տակէն ի՞նչպէս պիտի ելլենք:

Լիլիթ.- Մի վախնար, շատ ալ լաւ կ'ելլես:

Սերժ.- Ես կը վախնամ...

Տնօրէն.- Պարոն Նորահարուստեան, եթէ բան մը կայ...

Լիլիթ.- Բան մըն ալ չկայ, դուք Սերժիս մի նայիք:

ՀԱՇՆՈՒՊԱՆՈՒԿՆԵՐԻ.- Ուրեմն ժանին ալ ընդհանուր գումարը ժաքին գումարէն միայն ութ հարիւր տոլար աւելի է...

Լիլիթ.- Լա՛ւ բան մը չէ, ես կը կարծէի, որ շուրջ տասնհինգ հազար մը պիտի ելլէ մեր վճարելիքը...

Տնօրէն.- Ձէ, ի՞նչ կ'ըսէք տիկին, հակառակ անոր որ մեր հաստատութիւնը ամերիկեան սկզբներէն լի էր հիմնուած է, մեր թոշակները շատ համեստ են: Կը մտածէիք այս տարի քիչ մը, միայն երեսուն տոկոսով աւելցնել, բայց նկատելով տնտեսական ընդհանուր տագնապը, դուս մարդը սիրական նկատումներով, միմիայն քսան առ հարիւրով աւելցուցինք: Մենք կը հասկնանք մարդոց տագնապը:

Լիլիթ.- Ա, որքան ազնիւ էք, «ըսթեթ-տնօրէն»...

ՀԱՇՆՈՒՊԱՆՈՒԿՆԵՐԻ.- Սերժ-ըսթեթ-տնօրէն, ուրիշ բան կա՞յ:

Լիլիթ.- Հարցում մը միայն, ինչպէս պիտի վճարենք այս գումարները:

Տնօրէն.- Ինչպէս որ կը հանգստացնէ ձեզ, հիմա մարդասիրական մեր զգացումները կը ստիպեն, որ որոշ դերութիւններ շնորհենք: Երեք մասնակցութիւնով եթէ գոցէք...

Լիլիթ.- Սիրով, սիրով, ինչո՞ւ չէ:

Սերժ.- Քիչ մը համբերէ Լիլիթ, դասաւորենք մենք մեզի:

ԱՅՏԵՆՈՂ ՇԱԲԱԹԸ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՃԱՆԿԱՐ

Սեպտեմբերի առաջին օրերից սկսած, երկրում ծաւալուող քաղաքական գործընթացները անմիջապէս ձեռք բերեցին նախընտրական «թէժ աշնան» եւ արտաքին ձեռք, եւ ներքին բովանդակութիւնը:

Նախագահական ընտրութիւնները դեռեւս 5 ամիս առաջ արդէն յստակ տեսք է ստանում քաղաքական դաշտը, որը յիշեցնում է երկու սուր եւ մէկ լայն անկիւններով մի եռանկիւնի: Սուր անկիւնները զբաղեցրել է գործօն (16 կուսակցութիւնների միաւորում) եւ կրաւորական (ՀՀՇ եւ նրա արբանեակներ) ընդդիմութիւնը, իսկ անկիւններից երրորդը պատկանում է նոյնպէս համախմբման գործընթացի մէջ գտնուող իշխանութեանն ու նրան աջակցող կուսակցութիւններին:

Ուժերի նման դասակարգութիւնը, մեր կարծիքով, սկզբունքային փոփոխութիւններ չի կրի՝ առնուազն մինչեւ 2003ի նախագահական ընտրութիւնները, թէ՛ եւ չի բացառում, որ առկա քաղաքական ճամբարներից առաւել անկախունն ու յեղեղուկը՝ 16 կուսակցութիւնների միաւորումը մինչեւ ընտրութիւնները կը պահպանի միասնական քաղաքական խմբաւորման իր արտաքին ձեռք, բայց ո՛չ ներքին բովանդակութիւնը:

Նման կանխատեսումը հիմնուած է այն փաստի վրայ, որ ինչպէս 16ի միաւորման քաղաքական յայտարարութեան մէջ, այնպէս էլ Սեպտեմբերի ձին կայացած մամուլի ասուլիսում փաստորէն առաջ է քաշուել միայն մէկ քաղաքական խնդիր՝ իշխանափոխութեան անհրաժեշտութիւնը եւ ուրեք մէկի համար դեռեւս պարզ չէ միաւորման միասնութիւնը եւ գործողութիւնների նպատակաւացուցիկ պահպանելու համար պարտադիր՝ նախագահի միասնական թեկնածուի անձը եւ միասնական նախընտրական ծրագրի ուղղուածութիւնը:

Եւ առաջին, եւ երկրորդ խնդիրները բուռն քննարկումներն ու խիստ հակասական կարծիքների արտայայտման առիթ են դարձել Հայաստանի քաղաքական դաշտում, ուստի միաւորման մասնակիցներն իրենք զգուշանում են այդ հարցերի վերաբերեալ վերջնական կարծիք արտայայտելուց: Պատճառն ակնյայտ է՝ եւ առաջին, եւ երկրորդ խնդիրները անլուծելի են մեծ թուով քաղաքական առաջնորդներից եւ համայնավարականից մինչեւ աջ-ազատական գաղափարախօսութիւն դաւանող ուժերից բաղկացած 16ի միաւորման համար, ուստի ընդհանուր նպատակի իրականացումն ընտրութիւններից առաջ իշխանութեան դիրքերից թուլացման ու խարխումակ համար միաւորման անհրաժեշտ է որքան հնարաւոր է յետաձգել սկզբունքային հարցերի հանգուցալուծումը:

Սակայն այս հանգամանքը գիտակցում են ոչ միայն իրենք՝ կուսակցութիւնների միաւորման մասնակիցները, այլեւ ընդդիմութեան միւս թեւում եւ իշխանութեան ճամբարում գտնուող ուժերը: Դրանով կարելի է բացատրել միաւորման ապագայի վերաբերեալ վերջիններիս կողմից արտայայտուող հաւաստարապէս յոռեստական կանխատեսումների առատութիւնը:

Ինչպէս իշխանութեան ճամբարից (Գալուստ Սահակեան), այնպէս էլ ՀՀՇի կողմից (Տիգրան Յակոբեան) նորայայտ միաւորման հասցէին արտայայտած ոչ հանելի, բայց բովանդակութեամբ գրեթէ նոյնական հաճախօսութիւնները ամենեւին էլ չեն վկայում այն մասին, որ վերջին երկու ճամբարները կարող են ընդհանուր եզրեր գտնել՝ 16ի միաւորման հանդէպ իրենց քաղաքականութեան մէջ: Ընդհակառակը, առայժմ քաղաքական կեանքի ինքնուրույն մաս չչարձած 16ի միաւորումը վերածուելու է ՀՀՇի եւ իշխանութեան քաղաքական մրցակցութեան առարկայի:

16ի կողմից Հայաստանի քաղաքական դաշտում իրականացուած «մեծ զօրահաւաքից» յետոյ խաղաղաշուք դուրս մնացած ուժերը եւ մասնաւորապէս առաջին, մեծ յաւակնութիւններ ունեցող քաղաքական առաջնորդները եւս փորձելու են խառնուել տուեալ խաղին: Անցնող շաբաթուան ընթացքում նրանցից սեփական գոյութեան մասին յիշեցրին երկուսը՝ Պարոյ Հայրիկեանը, որը Սեպտեմբերի 3ին մամուլի ասուլիս հրաւիրեց եւ առաջարկեց ստեղծել նաեւ ազգային-ազատական դաշինք եւ Բաֆֆի Յովհաննիսեանը, որը մամուլում հանդէս եկաւ նախագահի թեկնածուի քաղաքական գործունէութեան ծրագրի յիշեցնող ծրագրային յօդուածով:

16ի միաւորման ձեւաւորումը յարմար առիթ դարձաւ նաեւ քաղաքական այլ ուժերի ու գործիչների աշխուժացման ու դիրքորոշումների յստակեցման համար: Այդ առումով, անցնող շաբաթուան ընթացքում հնչած թեքում ամեն

ԸՆԿԵՐԱՅԻՆ ԻՈՂԵՐ

Լիբանանեան կեանքի երեւոյթներ

ԼԻԲԱՆԱՆ ՎԵՐԱԳՏԱԻ ԻՐ ԿՈՐՄՆՅՈՒՑԱԾ «ՍԵՒ ՈՍԿԻՆ» ԶԲՕՍԱՇՐՋՈՒԹԻՒՆԸ

Սեպտեմբերի առաջին կիսուն, Լիբանանեան ժամանած մեծ թիւով զբօսաշրջիկները արդէն իսկ վերադարձած են իրենց երկիրները՝ կրթական վերամուտին հետ վերսկսելու իրենց առօրեայ աշխատանքներուն:

